Հաստատում եմ.
Տնօրեն՝ [signature] Հ. Բարսեղյան
01.09.2022

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇԻՆՈՒՀԱՅՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ

ՎԻՏԱԼԻ ԲԱԳՐԱՏՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2022-2023 ՈՒՍՏԱՐԻ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Պլանավորման և ծրագրավորման գործառույթ

1. Սովորողների դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը ծրագրավորում է սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքները, այդ ուղղությամբ համագործակցում դասղեկների հետ

- Մասնակցում է հաստատության և սովորողի ընտանիքի սերտ կապի և համագործակցության ապահովմանը
- Մանկապատանեկան կոլեկտիվի կենսագործունեության
- Ուսումնական,
- Կարգապահական
- Ճանաչողական
- Աշխատանքային
- Գեղագիտական
- Առաջնորդության դրսևորման
- Միջոցառումների կազմակերպման
- Նիստերի, ժողովների անցկացման
- Ազատ փոխհարաբերվելու կկարողությունների զարգացման
- Այլ գործառույթներ

2. Պլանավորում է դասղեկների հետ համագործակցելու միջոցներն ումեխանիզմները

➢ ԿԱՊԿՈ սաների, դաստիարակության հարցերը՝ սոցիալական մանկավարժի տարվա պլան-ծրագրի հետ ծանոթացման ճանապարհով:

3. Ծրագրում է աշակերտական ինքնավարության կանոնադրության ողջգործառույթը(կանոնադրության մասսայականացում, հանձնախմբերիձևավորում, դասարանական ընտրություններ, համադպրոցական ընտրություններ, հաշվետու կոնֆերանս, ժողովներ):

4. Տնօրենության հետ համատեղ(հանձնարարությամբ, հրահանգով) նպաստում էդպրոցի կենսագործունեության պլանի իրականացմանը :

Կազմակերպչական գործառույթ

1. Կանոնակարգում է պլանավորված աշխատանքը
2. Ձևավորում է նախաձեռնող խմբեր տարբեր տարիքի սաներից
3. Խթանում է ցանկացած նպաստավոր նախաձեռնություն
4. Հանդուրժողականության, համագործակցության մեխանիզմներով ներգրավում ծրագրերի իրականացմանը(աշակերտներին, ծնողներին, ուսուցիչներին, համայնքի տարբեր գործունեության ներկայացուցիչներին):
5. Աշակերտական խորհրդի աշխատասենյակը ձևավորում է հնարավորինս հաճելիորեն ժամանակակից և տրամադրող, այն ծառայեցնում սաների ազատ ժամանցին, ուսումնադաստիարակչական լրացուցիչ գործառույթներին:
6. Սաներին ներգրավում սենյակի ձևավորմանը և ներքին կանաչապատմանը:
7. Ընտրում է աշխատանքների կազմակերպման եղանակները՝ ելնելով արդյունավետության աստիճանից
8. Որոշակի չափանիշներով գնահատում է մոտեցումները տվյալ գործառույթի նկատմամբ(դասարանախմբերի, ծնողների, տնօրենության, սպասարկող անձնակազմի և այլ):

Լրացուցիչ դաստիարակության գործառույթ

1. Դաստիարակչական աշխատանքն իրականացվում է՝ ելնելով դպրոցի ընդհանուր դաստիարակչական խնդիրներից՝ Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենքի շրջանակում:
2. Դաստիարակության քաղաքականուիթյունը ենթադրվում է հանրակրթության պետական կրթակարգի հիմնական դրույթներից
3. Կրթության կազմակերպման ընդհանուր սկզբունքները և կյանքին հարաբերվելու հմտությունները հանդիսանում են դաստիարակության իրականացման ուղենիշեր:
4. Ժողովրդավար հասարակության, քաղաքացու ձևավորման գործում խտացվում է ետդասյա գործունեության շրջանակները(ինքնակառավարում, գեղագիտական, ռազմամարզական միջոցառումներ, շփումներ, հասարակական գիտությունների զբաղվողների հետ, ՏՀՏ հմտություններ)

5. Կազմակերպչի մանկավարժական գործունեությունից ամենառաջնայինը համարելով դաստիարակչականը՝ իրականցնում է դասղեկների միավորելու խնդիրը՝ ջանքերի համատեղումը ուղղորդելով հիմնախնդիրների իրականացմանը:

6. Աշակերտական ինքնավարությանը ցուցաբերում մանկավարժական աջակցություն:

- Հանձնախմբերի ձևավորում
- Կանոնադրական կարգի ծանոթացում, ընտրական կարգիապահովում
- Աշակերտական ամենամյա կոնֆերանսի անցկացում
- ԱԽ նախագահի(տեղակալի) խորհդակցական ձայնի իրավունքով, դպրոցական խորհրդին, մանկավարժական խորհրդին , ծնողականխորհրդին մասնակցության ապահովում
- Աշակերտական մամուլի լույսընծայում

7. Օրացուցային տոներին (և ընթացիկ տոնակատարություններին) ակտիվության ապահովում

8. Միջոցառումների բովանդակային փոփոխություններով պայմանավորել աշակերտի՝ քաղաքացու, անձի սոցիալական նոր որակի ձևավորում:

9. Աշակերտական խորհրդի սենյակի գործունեությունը ծառայեցնել ուսումնադաստիարակչական գործընթացի խթանմանը:

10. Դպրոցական առօրյայի կարգապահական մակարդակի բարձրացման նպատակով աշակերտական հերթապահության ինքնավերահսկողության ակտիվացում.

- Ուշացումների գրանցում, քննարկում
- Դպրոցական կանոնավոր կեցվածքի խրախուսում
- Այլ (օր, սովորողի դաստիարակվածության ելակետային մակարդակի վերահսկում):

11. Գեղագիտական միջոցառումների շրջանակի ընդլայնումով նպաստել դեռահասներին սոցիալական անբարենպաստ միջավայրի ազդեցությունից առավելագույնս զերծ պահելուն: 12.Էքսկուրսիաների և տեղակատվության միջոցով իրազեկել քաղաքի մշակութային օջախներին, նշանավոր մարդկանց և նշանավոր գործերին: 13.Դասղեկների հետ հանդիպումներում քննարկումների նյութ դարձնել դպրոցական առօրյայից խուսափող երեխաների հարցը: 14.Ծնողներին

հնարավորինս ներգրավել ետդասյա աշխատանքերում:

Համագործակցային գործառույթ

1.Համագործակցային հարաբերությունները կնպաստեն անձի ինքնաբացահայտմանը, զարգացման կարողությունների ճանաչմանը

- Ամենօրյա շփումներում սաների հետ
- Միջոցառումների պլանավորման ու ծրագրերի իրագործման ընթացքում
- Էքսկուրսիաների ժամանակ
- Արտադպրոցական-արտադասարանական աշխատանքներում

2.Շարունակել համագործակցությունը այլ դպրոցների աշակերտական խորհուրդների, դասարանախմբերի, ուսուցիչական կոլեկտիվների հետ.

- Մասնակից դարձնել համաժողովներին
- Կազմակերպել մրցույթ-վիկտորինաներ, էքսկորսիաներ…

2. Նախահարձակ լինել արտասահմանյան կազմակերպությունների հետ համագործակցությանը, օգտագործել ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորությունները ևս:

Երեխայի սոցիալական պաշտպանության գործառույթ

Սոցիալական պաշտպանությունը հոգեբանամանկավարժական միջոցների ամբողջություն է, որոնք երաշխավորում են երեխայի անհատականության ձևավորումը, հարմարեցումը, գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական պայմաններին, որի համար

- <<Ռիսկային գոտու>> երեխաներին առավելագույնս ներգրավելարտադասարանական-արտադպրոցական գործընթացին.
- Կազմակերպել այցելություններ դժվար իրավիճակում հայտնվածերեխաների ընտանիքներին.
- Ճշգրիտ վերլուծություններով կանխել սուր իրավիճակները.
- Ուղղորդել, որպեսզի երեխան կարողանա խուսափել աննպաստ սոցիալական միջավայրից՝(հաշվի առնելով նրա ելակետային դաստիարակության աստիճանը),
- Ցուցանել մեխանիզմներ կարճ ժամանակահատվածում կողմնորոշվելու և սուր իրավիճակից դուրս գալու համար (հակաճգնաժամային

հոգեվերլուծություններ)

Աշակերտական ինքնակառավարման խթանման գործառույթ

1. Աշակերտական ինքնակավարությունը գործելով կանոնադրական պահանջների շրջանակում իրականացնել կամավորության սկզբունքով:
2. Նպաստել դասարանական խորհուրդների թափանցիկ ձևավորմանը:
3. Կազմակերպել ֆորումներ, մտքերի տեսակետների, սկզբունքների դրսևորման հրապարակներ՝ աշակերտի ինքնադրսևորման և ինքնահաստատման նպատակով:
4. Ավանդույթի ուժով պահպանել <<ինքնավարի օր>> գործատռույթը:
5. Փորձել անցկացնել դպրոցական ինքնավարության ատեստացիա:
6. Ձեռք բերել պայմանավորվածություն ինքնավարների, ավագների և ԱԽ նախագահների տնօրենության, համայնքի, ղեկավարի, ավագանու հետ հանդիպման:
7. Օժանդակել աշակերտական փոքր ու մեծ նախաձեռնությունները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՀՀ	Աշխատանքի բովանդակությունը	Պատասխանատու անձ	Կատարման ժամկետը
1	Դպրության տոնի հետ կապված միջոցառմնա կազմակերպում: 31 առաջին դասարանցիների երդման արարողության պատշաճ կազմակերպում: Դասրանների տոնական տեսքի բերում	ԴԱԿ Դասղեկներ	Սեպտեմբեր
2	Անկախության տոնին ընդառաջ ամրապնդել ավանդույթը՝ <<Անկախ Հայաստան>> պաստառների ստեղծում Համադպրոցական միջոցառման կազմակերպում	ԴԱԿ Դասղեկներ	
3	Ծնողական ժովների կազմակերպում: Դասարանական ԾԽ նախագահի ընտրություն	ԴԱԿ	սեպտեմբեր
4	Ծնողական Խորհրդի նախագահի ընտրություն/ դպրոցական/	ԴԱԿ	սեպտեմբեր
5	Յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթն հրավիրել ԾԽ նիստ	ԴԱԿ	Տարվա ընթացքում
6	Լավագույնս արձագանքել համայնքային, մարզային, և հանրապետական բոլոր առաջադրված ծրագրերին. • Հակահամաճարակային իրավիճակ • Արտակարգ իրավիճակ	ԴԱԿ Դասղեկներ	Տարվա ընթացքում
7	Աշակերտական հերթապահության կազմակերպում, անցկացում	ԴԱԿ Դասղեկներ	Տարվա ընթացքում

8	Ուսուցչական հերթապահության կազմում և վերահսկում	ԴԱԿ	Տարվա ընթացքում
9	Ճանաչողական, համադպրոցական հեռավոր էսկուրսիաների կազմակերպում	ԴԱԿ Դասղեկներ	Տարվա ընթացքում
10	Համագործակցային աշխատանք անապահով ընտանիքների հետ.	ԴԱԿ Ծրագրի մասնակիցներ	Տարվա ընթացքում
11	Օրացուցային տոն օրերին/ հատկապես պետական նշանակություն ունեցող/ գեղագիտական միջոցառումներ	ԴԱԿ Դասղեկներ	Սեպտեմբեր
12	<<Հայրենիքը լեզու է, նա միացնում է անցյալը, ներկան և ապագան>> կարգախոսին համահունչ կազմակերպել քննարկումներ, դասընթացներ :	ԴԱԿ Դասղեկներ	Տարվա ընթացքում
13	Պարբերաբար կրտսեր, միջին և ավագ դպրոցի սաներին ծանոթացնել Արցախի գոյամարտի տարեգրությանը, պատմությանը և առհասարակ դրանց հետ կապված էլեկտրոնային էջերին:	ԴԱԿ Դասղեկներ Զինղեկ	Տարվա ընթացքում
14	<<Ով մոռանում է անցյալը՝ նա դատապարտված է…>> այցելություններ հուշարձաններ, զորամասեր:	ԴԱԿ Զինղեկ Դասղեկներ	Տարվա ընթացքում
15	Մասնակցել համայնքային և եկեղեցական բոլոր տոնակատարություններին, դասղեկներին, ներգրավել դրանցում, աշակերտներին իրազեկել ժամանակի առօրյային:	ԴԱԿ Դասղեկներ	Տարվա ընթացքում

16	<<Բնությունը անսպառ չէ…>> Անցկացնել դպրոցի ներքին և արտաքին կանաչապատման ակցիա/ միջին դասարանախմբերի հետ/ բնույթը՝ մրցույթային:	ԴԱԿ Կենսաբանության Աշխարհագրության ուսուցիչներ Դասղեկներ	Գարնանը
17	Վարք, վարվելակերպ, ամեն տեղ, ամենուր / այն ձևավորվում է ընտանիքում, դպրոցում, հասարակության մեջ և ուղեկցում մարդուն ամբողջ կյանքում/ ➢ Համացանցային այցելություն թանգարաններ,պատկերասրահներ, թատրոններ,	ԴԱԿ Դասղեկներ	Տարվա ընթացքում
18	Դասարանական անկյունների ստեղծում	ԴԱԿ Դասղեկներ	Տարվա ընթացքում
19	Պատի թերթերի ստեղծում	ԴԱԿ Դասղեկներ և ուսուցիչներ	Տարվա ընթացքում
20	Համադպրոցական ծնողական ժողովի հրավիրում :	ԴԱԿ	Տարվա ընթացքու

ԱԿՏԻՎԱՑՆԵԼ ԾՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

N	Գործողություն	Ժամանակահատված	Պատասխանատու
1.1	Կազմակերպել դասընթացներ ա) Ծնողներին ներկայացնել դպրոցի կառավարման համակարգը, ծնողական խորհրդի կանոնադրության ուղեցույցը	Ուսումնական տարվա ընթացքում	ԴԱԿ
	բ) Երեխայի դաստիրակաությունը ընտանիքում	Ուսումնական տարվա ընթացքում	ԴԱԿ
	գ) Ծնողներին ծանոթացնել ուսուցման նոր մեթոդներին և դրանց կիրառման ձևերին	Ուսումնական տարվա ընթացքում	ԴԱԿ
	դ) Ծնողներին հետաքրքրող թեմաներով սեմինարներ կազմակերպել ծնողների համար	Ուսումնական տարվա ընթացքում	ԴԱԿ
1.2	Կլոր սեղան-կազմակերպել քննարկումներ երեխաների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ՝ ծնողների և աշակերտների մասնակցությամբ	Ուսումնական տարվա ընթացքում	ԴԱԿ
2.1	Աջակցել ԾԽ-ին՝ կազմել իրենց տարեկան աշխատանքային գործողությունների պլանը	հոկտեմբեր	ԴԱԿ
2.2	Հանձնարարել դասղեկներին ծնողական ժողովների օրակարգ մտցնել ծնողների ակտիվացմանը նպաստող հարցեր	սեպտեմբեր	ԴԱԿ
2.3	Մշակել և իրականացնել ծնողների հատ շփման նոր ձևեր		ԴԱԿ
2.4	Ստեղծել ծնողների հետ կատարվող աշխատանքները լուսաբանող անկյուն		ԴԱԿ
3.1	ա) Հրավիրել ԾԽ-ի և դպրոցի կառավարման մյուս օղակների մասնակցությամբ նիստերի		ԴԱԿ
	բ) Նշել ծնողի օր		ԴԱԿ
3.2	Կազմել ԾԽ-ի և մյուս կառավարման օղակների համատեղ իրականացվող աշխատանքների պլան		ԴԱԿ
3.3	Հրավիրել ընդհանուր ծնողական ժողովներ, բարելավել ծնողական ժողովների անցկացման ձևերը		ԴԱԿ

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

հ/հ	Ազգանուն, անուն	Դասարան
1	Խանամիրյան Սոֆյա	I
2	Միրումյան Մերի	II
3	Շալունց Սյուզաննա	III
4	Մուշեղյան Մելինե	IV ա
5	Մարդյան Նուբար	IV բ
6	Ասրյան Անյուտա	V ա
7	Ավետյան Աքսաննա	V բ /նախագահ/
8	Դաղունց Տաթևիկ	VI
9	Դանիելյան Մելինե	VII
10	Զորունց Մերի	VIII
11	Գրիգորյան Աննա	IX ա
12	Բալյան Սոֆյա	IX բ
13	Արզումանյան Աննա	X ա
14	Պետրոսյան Կարինե	X բ
15	Աբգարյան Էմմա	XI ա
16	Վարդազարյան Ալմարա	XI բ
17	Կարապետյան Լուսինե	XII ա
18	Արմենակյան Թագուհի	XII բ

ՄԻԿՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հ/հ	Անվանումը	Ամիս/օր
	Սեպտեմբերի մեկ/ Գիտելիքի միջազգային օր	Սեպտեմբերի 1
	Արցախի անկախության օր	Սեպտեմբերի 2
	ՀՀ անկախ պետություն է	Սեպտեմբերի21
	44 օրյա պատերազմ/ հիշատակի օր	Սեպտեմբերի 27
	Ուսուցչի տոն/ միջոցառում	Հոկտեմբերի 5
	Ոսկե աշուն	Հոկտեմբեր
	Թարգմանչաց տոն	Նոյեմբեր
	ՄԻԱՎ/ՁԻԱՀ	Դեկտեմբեր 1
	Բնական աղետներ	Դեկտեմբերի 6
	Երկրաշարժ	Դեկտեմբերի 7
	Ամանոր և Սուրբ ծնունդ	Դեկտեմբեր Հունվար
	Կանանց միջազգային օր	Մարտի 8
	Քառօրյա պատերազմ	Ապրիլի 2-5
	Հայոց Մեծ եղեռն	Ապրիլի 24
	Աշխատավորի օր	Մայիսի 1
	Հաղթանակների օր	Մայիսի 9
	Երեխաներ պաշտպանության միջազգային օր	Հունիսի 1

ՏՈՆԵՐ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐ

1	Գիտելիքի, գրի և դպրության օր	Սեպտեմբեր
2	Արցախի հանրապետության հռչակման օր	
4	ԱԻՆ(արտակարգ իրավիճակների նախարարության) աշխատակցի օր	
3	Օզոնային շերտի պահպանման միջազգային օր	
4	Աստղագիտության օր	
5	Հայաստանի Հանրապետության անկախության օր	
6	Օվկիանոսի միջազգային օր	
7	Քաղաքացիական ավիացիայի օր	
8	Տարեցների միջազգային օր , երաժշտության միջազգային օր	Հոկտեմբեր
9	Կենդանիների պաշտպանության համաշխարհային օր	
10	Ուսուցչի մասնագիտական տոն	
11	Երևանի օր	
12	Գրադարանավարի միջազգային օր	
13	Փոստի միջազգային օր	
14	Թարգմանչաց տոն	
15	Ծխախոտի դեմպայքարի ազգային օր	
16	Հայ մամուլի օր	
17	1999թ. Նահատակների հիշատակի օր	
18	Տեղական ինքնակառավարման օր	Նոյեմբեր
19	Հանդուրժողականության միջազգային օր	
20	Ուսաղների միջազգային օր	
21	Երեխաների իրավունքների կոնվենցիայի հռչակման օր / 1989/	
22	Կանանց հանդեպ բռնության վերացման միջազգային օր	
23	ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օր	Դեկտեմբեր
24	Հաշմանդամների միջազգային օր	
25	Երկրաշարժի զոհերի հիշատակի օր	
26	Մարդու իրավունքների օր	
27	Ազգային անվտանգության անվտանգության մարմինների աշխատողի օր	
28	Նվերների միջազգային օր	
29	Ամանորի տոնական օր մինչև հունվարի 6-ը Ծննդյան տոներ	
30	Ամանորի տոնական օրեր	Հունվար
31	Ծնունդ Հայտնություն Հիսուս Քրիստոսի	

32	ՄԱԿ-ի թղթակիցների ասոցիացիայի հիմնադրման օր /1948/, Դոնորի օր	
33	Հայոց բանակի հիմնադրման օր	
34	Մարդու իրավունքների կոնվենցիայի վավերացման օր	Փետրվար
35	Տեառն ընդառաջ	
36	Մայրենի լեզվի միջազգային օր	
37	Բաքվի ջարդերի զոհերի հիշատակի նբռնագաղթած հայ բնակչության իրավունքների պաշտպանության օր	
38	Կանանց իրավունքների և միջազգային խաղաղաության օր	Մարտ
39	Ռասասյական խտրականության դեմ պայքարի համերաշխության օր	
40	Ջրային ռեսուրսների պաշտպանության համաշխարհային օր	
41	Օթերևութաբանի օր	
42	Թատրոնի միջազգային օր	
43	Կատակների և սրամտությունների օր	Ապրիլ
44	Մանկական գրքի միջազգային օր	
45	Միջազգային դատարանի առաջին նիստի գումարումը Հաագայում /1946/	
46	Սուրբ Զատիկ	
47	Մայրության և գեղեցկության օր	
48	Գնչուների համաշխարհային օր	
49	Ավիացիայի և տիեզերագնացության համաշխարհային օր	
50	Ոստիկանության օր	
51	Հուշարձանների և պատմական վայրերի համերաշխության օր	
52	Գիրք նվիրելու օր և Ամենայն հայոց բանաստեղծ Հ. Թումանյանի ծննդյան օր	
53	Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր	
54	Սահմանապահի օր	
55	Աշխատանքի անվտանգության պաշտպանության համաշխարհային օր	
56	Աշխատավորների միջազգային համերաշխության օր/ նշվում է 1889թ.ից/	Մայիս
57	Մամուլի ազատության համաշխարհային օր	
58	Ռադիոյի, հեռուստատեսության ու կապի աշխատողների մասնագիտական օր	
59	ՀՀ-ում երկրապահի օր, Կարմիր խաչի և կարմիր մահիկի համաշխարհային օր	

60	Հաղթանակի և խաղաղության տոն, Ծուծիի ազատագրության օր	
61	Ընտանիքի միջազգային օր	
62	Հայաստանի Հանրապետության օր	
63	Ծխելու դեմ պայքարի համաշխարհային օր	
64	Երեխաների պաշտպանության միջազգային օր	Հունիս
65	Բնապահպանի օր	
66	Բռնադատվածների հիշատակի օր	
67	Բուժաշխատողի օր	
68	Թմրանյութերի չարաշահման և ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային օր	
69	Անհայտ կորած ազատամարտիկի հիշատակի օր	
70	Հողաշինարարի և գեոդեզիստի օր	
71	Դատախազության աշխատողի օր	Հուլիս
72	Սահմանադրության օր	
73	Երիտասարդության միջազգային օր	
74	Զախլիկների միջազգային օր	Օգոստոս